ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ
(1914–1984)

* * *

Քեզ ոչ թե հույսի ընդունայն խոսքեր,
Դաշտի ծաղիկներ կուզեի քեզ տալ,
Քեզ ոչ թե դաշտի թոշնող ծաղիկներ,
Երկնքի աստղեր կուզեի քեզ տալ,
Քեզ ոչ թե մութից դողացող աստղեր,
Մայր իմ, արևներ կուզեի քեզ տալ,
Քեզ ոչ թե հազար գարնան արևներ,
Կյանքի ծովերը կուզեի քեզ տալ,
Որ դար ու դարեր քո սիրով անամպ
Լցնեիր կյանքը քո սուրբ սրբությամբ,
Մայր իմ, արևս կուզեի քեզ տալ,
Հավերժությունը ողջ տիեզերքի,
Թեկուզ մի վարդ էլ քեզ պարտք չմնալ,
Ո՛վ աստվածություն՝ խիղճ ու արցունքի...

Բառային աշխատանք

1. Բանաստեղծությունից դուրս գրիր *բ–պ–փ* բաղաձայնների ուղղագրությանը պատկանող բառեր:
2. Պարզիր՝ պատկերավորման-արտահայտչական ինչ միջոցներ են գործածված՝ նշելով տեսակը:
3. Գտիր *արեգակ*, *մաքուր*, *ամբողջ*, *արտասուք* բառերի հոմանիշները:
4. Դուրս գրիր երկինչյուն ունեցող բառերը:
5. Տրված բառերը համապատասխանեցրու իրենց իմաստներին՝

փմարդի	չափազանց բարդ, շատ բարդություններ ունեցող,
բազմաբարդ	անհարթ, դարուփոս,
խորդուբորդ	արբեցումի, կերուխումի անձնատուր, շվայտ, զեխ,
արբշիռ	մարդուն ոչ վայել, անազնիվ, անմարդկային:

6. Բառերը (բառաձևերը) տեղադրիր համապատասխան նախադասություններում՝ *փուրուդմփոց*, *նրբահյուս*, *սուրբ*, *անջրդի*, *զգլխիչ*:

   ա) _____ վարդերի բույրը տարածվել էր պարտեզում:

   բ) Արմենը անսպասելի _____ սկսեց:

   գ) Արփինեի _____ վարսերն օրորվում էին սյուքից:

   դ) Իմ _____ հայրենիք, դու սրտիս մեջ ես:

   ե) _____ մարգագետինները երաշտից խանձվել էին:
7. *Բուրդ*, *ողբ*, *սուրբ*, *ապերախտ*, *աղբ*, *երփներանգ*, *համբույր*, *խարխափել*, *ուրբաթ* բառերին արմատ և ածանց ավելացնելով՝ կազմիր նոր բառեր և գործածիր նախադասություններում:
8. Գրիր *անջրդի*, *բիրտ*, *շոգ* բառերի հականիշները և դրանք գործածիր նախադասությունների մեջ:

9. Նշի՛ր՝ որ բայն է արտահայտում *գլուխ բարձրացնել* դարձվածքի իմաստը:

ա) նստել
գ) զայրանալ
բ) ապստամբել
դ) թիկնել

Տեքստային աշխատանք

1. Բացատրի՛ր՝ ինչու է հեղինակն ուզում դաշտի ծաղիկներ, երկնքի աստղեր, կյանքի ծովեր և արևներ նվիրել մորը:

2. Ո՞րն է *Մայր իմ, արևներ կուզեի քեզ տալ* տողի խորհուրդը:

3. Քո գրքի անվանումը մայրենի է: Այն կապ ունի մայր բառի հետ:

4. Մեկնաբանի՛ր՝ ինչու են գործածվում *Մայր աթոռ*, *մայր քաղաք*, *մայր բուհ*, *մայր մեղու*, *մայր գումար* արտահայտությունները:

5. Գտի՛ր այլ բանաստեղծություններ մոր մասին: Մեկնաբանի՛ր:

6. *Բոլոր մարդկանց համար մայրը սրբություն է:* Ինչպե՞ս կմեկնաբանես այս միտքը: